Հայտարարվում է մրցույթ ՀՀ ՇՄ-ի «Անի կայարանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկա (3 դասաժամ), մաթեմատիկա (20 դասաժամ), ֆիզիկա (8 դասաժամ), քիմիա (7 դասաժամ), կենսաբանություն (8 դասաժամ), մայրենի-դասվար (17 դասաժամ), մաթեմատիկա-դասվար (11 դասաժամ), երաժշտություն (6,5 դասաժամ), կերպարվեստ (7 դասաժամ), ես և շրջակա աշխարհը (4 դասաժամ), ֆիզկուլտուրա (17 դասաժամ), տեխնոլոգիա (5 դասաժամ), հայոց լեզու և գրականություն (24,5 դասաժամ) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **նոյեմբերի 11-ից մինչև նոյոեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 27-ին՝ ժամը 14:00-ին**, Անի կայարանի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք, գյուղ Անիավան, փ 1, շ. 5/1: Տեղեկությունների համար զանգահարել (093 23 95 11) հեռախոսահամարով: